

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ և ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ (ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԴԻՏԱՐԿԵԼՈՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ,
ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ)

Պետրոս ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՊՏՀ Ֆինանսական հաշվառման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. ակտիվների իրացվելիություն և վճարունակություն, ֆինանսական արդյունք, սահմանային միջակայքեր

Սույն հոդվածի նպատակն է ֆինանսական արդյունքի վրա ազդող գործոնների վերահսկողության նպատակով մշակվել է ակտիվների իրացվելիության և վճարունակության սահմանային միջակայքերի որոշման մոտեցում՝ փոխկապվածության մեջ դիտարկելով ակտիվների իրացվելիությունը, վճարունակությունը և ֆինանսական արդյունքը: Այս նպատակի իրականացման համար ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի ֆինանսական արդյունքի վրա հանքարդյունաբերության ոլորտի առաջատար կազմակերպությունների համար մեր կողմից տարանջատված երկու գործոնների՝ հիմնական միջոցների մաշվածության և արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևվանքների ազդեցությունը կփոխկապակցենք իրացվելիության և վճարունակության ֆինանսական կառավարման գործընթացի հետ: (Նշենք, որ Ապառաժ Մայնինգ ՍՊ Ընկերությունը հիմնադրվել է 2010 թվականին, տեղակայված է Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի մերձակայքում, զբաղվում է պայթուցիկ նյութերի արտադրությամբ: Ընկերության արտադրանքը սպառում են ՀՀ գրեթե բոլոր հանքարդյունաբերական ընկերությունները: Ընկերությունը ունի շուրջ 100 աշխատակից¹): Այդ նպատակով անհրաժեշտ ենք համարել իրականացնել հետևյալ հաջորդական քայլերը.

1. Որպես արդյունքային ցուցանիշ՝ y , ընտրվում է հաշվեկշռային շահույթ / (հիմնական միջոցների մաշվածություն + արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքներ) հարաբերակցությունը, իրացվելիության կապի տեսանկյունից գնահատելու համար որպես փոփոխականներ ընտրվել են բացարձակ իրացվելիության՝ X_1 , կրիտիկական իրացվելիության՝ X_2 և ընթացիկ իրացվելիության՝ X_3 գործակիցները, իսկ վճարունակության կապի տեսանկյունից գնահատելու համար որպես փոփոխականներ ընտրել ենք պարտավորությունների գումար/ակտիվների գումար՝ Z_1 , պարտավորությունների գումար/սեփական կապիտալ՝ Z_2 , երկարաժամկետ պարտավորություններ/ (երկարաժամկետ պարտավորություններ + սեփա-

¹ Տեղեկատվությունը վերցված է Ապառաժ Մայնինգ ՍՊ Ընկերության պաշտոնական վեբ կայքից. www.aparag-mining.am

կան կապիտալ)՝ Z_3 , զուտ դրամական հոսքեր / պարտավորությունների գումար՝ Z_4 ,

2. Կազմվում է համադրելի աղյուսակ, որի համար ելակետ ենք ընտրել արդյունքային ցուցանիշի համար առավելագույն, իսկ ընտրված փոփոխականների հետազոտված հանքարդյունաբերության ոլորտի առաջատար կազմակերպությունների համար միջին ցուցանիշները,

3. Կառուցվում են երկու ռեգրեսիոն հավասարումներ՝ $Y_X = a_0 + a_1 * X_1 + a_2 * X_2 + a_3 * X_3$ և $Y_Z = b_0 + b_1 * Z_1 + b_2 * Z_2 + b_3 * Z_3 + b_4 * Z_4$,

1. Այս քայլում փոքրագույն քառակուսիների մեթոդի կիրառմամբ որոշում ենք Y_X և Y_Z ռեգրեսիոն հավասարումների փոփոխականների կշռային ազդեցությունները,

2. Հիմք ընդունելով Y_X և Y_Z ռեգրեսիոն հավասարումները՝ փոփոխականների կշռային ազդեցություններին համապատասխան կատարվում է տարիների կտրվածքով հետազոտված կազմակերպության արդյունքային ցուցանիշի դասակարգում՝ ելակետ ընդունելով առաջարկված սահմանային գոտիները,

Աղյուսակ 1. ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի համար ընտրված ցուցանիշների հաշվարկված մեծությունները 2010-2015թթ.

Ցուցանիշ/ Տարեթիվ	2010	2011	2012	2013	2014	2015
1.Արտադրության փոխարժեքային տարբերությունից եկամուտ, մլն.դրամ	7,3	4,5	15,9	9,6	83,4	24,17
2.Արտադրության փոխարժեքային տարբերությունից ծախսեր, մլն. դրամ	10,03	17,8	70,06	12,39	210,55	46,43
3.Հիմնական միջոցների մաշվածության ծախս (հարկային մոտեցմամբ), մլն. դրամ	23,85	131,54	224,49	252,11	298,48	490,94
4.Հաշվեկշռային շահույթ մլն. դրամ	163,47	272,41	421,84	756,32	629,36	507,21
5.Բացարձակ իրացվելիության գործակից՝ X_1	0,06	0,005	0,02	0,03	0,01	0,03
6. Կրիտիկական իրացվելիության գործակից՝ X_2	0,64	0,47	0,74	1,5	1,55	2,78
7. Ընթացիկ իրացվելիության գործակից՝ X_3	0,95	0,66	1,6	3,98	2,56	6,62
8. Պարտավորությունների գումար/ ակտիվների գումար՝ Z_1	0,79	0,92	0,85	0,4	0,53	0,57
9. Պարտավորությունների գումար/ Սեփական կապիտալ՝ Z_2	3,81	2,83	1,42	0,65	0,84	1,19
10. Երկարաժամկետ պարտավորություններ/ (Երկարաժամկետ պարտավորություններ + սեփական կապիտալ)՝ Z_3	0,74	0,63	0,49	0,32	0,46	0,54
11. Չուտ դրամական հոսքեր / պարտավորությունների գումար՝ Z_4	0,01	-0,004	0,003	0,001	-0,001	-0,002

Ըստ արդյունքային ցուցանիշի՝ որոշում ենք հետազոտված ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի համար իրացվելիության և վճարունակության օպտիմալ փոխհարաբերակցությունը՝ ըստ արդյունքային ցուցանիշի:

Առաջին քայլ: ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի 2010-2015թթ. համար մեր կողմից ընտրված ցուցանիշների հաշվարկված մեծությունները ներկայացվել են թիվ 1 աղյուսակում:

Երկրորդ քայլ: Արդյունաքային ցուցանիշի և ընտրված փոփոխականների համադրելի աղյուսակի կազմման համար օգտվել ենք ստորև ներկայացված աղյուսակ 2 տվյալներից՝ նախապես որոշելով աղյուսակում ներկայացված՝ որպես փոփոխականներ ընտրված ցուցանիշների համար միջին մեծությունները, իսկ արդյունաքային ցուցանիշի համար՝ ըստ առավելագույն արժեք ընտրված մեծությունը:

Աղյուսակ 2. ՀՀ հանքարդյունաբերության առաջատար կազմակերպությունների վճարունակության և ակտիվների իրացվելիության ցուցանիշների 2014թ. և 2015թ. միջին արժեքները

Կազմակերպության անվանում/ Ցուցանիշներ	Բացարձակ իրացվելիության գործակից միջին մակարդակ	Կրիտիկական իրացվելիության գործակիցի միջին մակարդակ	Ընթացիկ իրացվելիության գործակիցի միջին մակարդակ	Վճարունակության Գ1 գործակիցի միջին մակարդակ	Վճարունակության Գ2 գործակիցի միջին մակարդակ	Վճարունակության Գ3 գործակիցի միջին մակարդակ	Վճարունակության Գ4 գործակիցի միջին մակարդակ
«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	0,035	0,06	0,375	0,476	0,340	0,252	0,001
«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ	0,15	1,155	2,46	1,431	-0,711	1,414	0,039
«Ագարակի ՊՊՄԿ» ՓԲԸ	0,005	0,115	0,35	0,748	1,319	0,564	-0,002
«Թեղուտ» ՓԲԸ	0,007	0,012	0,11	1,104	-6,632	0,267	0,008
«ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	0,02	2,165	4,59	0,546	1,020	0,501	-0,001
«Մաքուր Երկաթի գործարան» ԲԲԸ	2,025	3,96	41,48	0,079	0,007	0,007	-1,102
«Բեյզ Մեթոլա» ՓԲԸ	0,031	0,1	0,83	0,639	1,066	0,435	0,040
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	0,0085	0,185	0,44	0,778	33,721	0,955	-0,030
«Գեոպրոմայինգ Գոլդ» ՍՊԸ	0,002	0,043	0,12	0,941	3,302	0,749	0,001
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	0,027	0,085	0,34	1,321	-0,870	-18,469	-0,010

Աղյուսակ 3. ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի համար արդյունաքային ցուցանիշի և ռեգրեսիոն հավասարումների կառուցման հիմքում դրված փոփոխականների համադրելի մեծությունները 2010-2015թթ.

Ցուցանիշ/ Տարեթիվ	2010	2011	2012	2013	2014	2015
Y	1	0,2977	0,32	0,3919	0,4746	0,1398
X ₁	0,1852	0,0154	0,0617	0,0926	0,0309	0,0926
X ₂	0,8122	0,5964	0,9391	1,9036	1,967	3,5279
X ₃	0,18593	0,12917	0,31314	0,77894	0,50103	1,29563
Z ₁	1,65966	1,93277	1,78571	0,84034	1,11345	1,19748
Z ₂	1,17008	0,86911	0,43609	0,19962	0,25797	0,36546
Z ₃	-0,5553	-0,4728	-0,3677	-0,2402	-0,3452	-0,4053
Z ₄	-0,0737	0,02949	-0,0221	-0,0074	0,00737	0,01475

Երրորդ քայլ: Կառուցում ենք ըստ իրացվելիության և ֆինանսական արդյունքի վրա ազդեցության գործոնների փոխկապակցությունը բնութագրող $Y_x = a_0 + a_1 * X_1 + a_2 * X_2 + a_3 * X_3$ ռեգրեսիոն հավասարումը, և վճարունակության ու ֆինանսական արդյունքի վրա ազդեցության գործոնների փոխկապակցությունը բնութագրող $Y_z = b_0 + b_1 * Z_1 + b_2 * Z_2 + b_3 * Z_3 + b_4 * Z_4$, ռեգրեսիոն հավասարումը:

Չորրորդ քայլ: Փոքրագույն քառակուսիների մեթոդի կիրառմամբ որոշում ենք կառուցված Y_x և Y_z ռեգրեսիոն հավասարումների փոփոխականների կշռային ազդեցությունները: Ռեգրեսիոն հավասարումների վիճակագրական բնութագրիչները ներակայցված է ստորև աղյուսակ թիվ 4-ում և 5-ում:

Աղյուսակ 4. Y_x ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները

<i>Ռեգրեսիոն վիճակագրություն</i>				
Կարգավորված R քառակուսի	0,836133			
Ստանդարտ շեղում	0,120336			
Դիտարկումներ	6			
<i>Վարիացիայի և կովարիացիայի վերլուծություն</i>				
	<i>df</i>	<i>SS</i>	<i>MS</i>	
Ռեգրեսիա	3	0,412881	0,137627	
Մնացորդային արժեքներ	2	0,028961	0,014481	
Ընդամենը	5	0,441842		
<i>Հաստատուն փոփոխական</i>	<i>Գործակիցների կշռային ազդեցությունները</i>	<i>P Հավանականություն</i>	<i>Ստորին 95%</i>	<i>Վերին 95%</i>
Ազատ անդամ	0,208983	0,13728	1,522308	0,267361
X_1	3,973971	0,909354	4,370104	0,048578
X_2	0,36453	0,221839	1,643223	0,242052
X_3	-1,27467	0,55145	-2,31149	0,146987

Աղյուսակ 5. Y_z ռեգրեսիոն հավասարման վիճակագրական բնութագրիչները


<i>Ռեգրեսիոն վիճակագրություն</i>				
Կարգավորված R քառակուսի	0,82828			
Ստանդարտ շեղում	0,123185			
Դիտարկումներ	6			
<i>Վարիացիայի և կովարիացիայի վերլուծություն</i>				
	<i>Df</i>	<i>SS</i>	<i>MS</i>	
Ռեգրեսիա	4	0,426667	0,106667	
Մնացորդային արժեքներ	1	0,015175	0,015175	
Ընդամենը	5	0,441842		
<i>Հաստատուն փոփոխական</i>	<i>Գործակիցների կշռային ազդեցությունները</i>	<i>P Հավանականություն</i>	<i>Ստորին 95%</i>	<i>Վերին 95%</i>
Ազատ անդամ	0,927917	0,325248	2,852951	0,214625
Z_1	-0,64004	0,297475	-2,15157	0,276977
Z_2	0,348352	0,275228	1,265686	0,425686
Z_3	-0,80649	0,488747	-1,65013	0,346849
Z_4	-3,91803	1,967409	-1,99147	0,296257

Կառուցված ռեգրեսիոն հավասարումների վերջնական տեսքը հետևյալն է.


$$Y_x = 0,208 + 3,974 * X_1 + 0,364 * X_2 - 1,275 * X_3, (2.3.1),$$

$$Y_z = 0,928 - 0,641 * Z_1 + 0,348 * Z_2 - 0,806 * Z_3 - 3,918 * Z_4, (2.3.2):$$

Հինգերորդ քայլ: Հետազոտված ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի համար 2010-2015թթ. կտրվածքով ստորև ներկայացնենք ըստ (2.3.1) և (2.3.2) ռեգրեսիոն հավասարումների դասակարգման արդյունքները և տարանջատենք իրացվելիության և վճարունակության ֆինանսական կառավարման համատեքստում ֆինանսական արդյունքի վրա ազդող գործոնների սահմանային գոտիներ: Արդյունքները ներկայացրել ենք գծապատկերներում:



Գծապատկեր 1. ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի 2010-2015թթ. դասակարգման արդյունքները՝ ըստ Y_x ռեգրեսիոն հավասարման



Գծապատկեր 2. ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի 2010-2015թթ. դասակարգման արդյունքները՝ ըստ Y_z ռեգրեսիոն հավասարման

Ըստ դասակարգման արդյունքների՝ ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ում ինչպես իրացվելիության, այնպես էլ վճարունակության ֆինանսական կառավարման գործընթացում ֆինանսական արդյունքի վրա երկու հիմնական գործոնների ազդեցության տեսանկյունից գնահատականը եղել է բացասական: Եթե իրացվելիության ֆինանսական կառավարման առումով եղել է անկումային 2013թ. -ին, ապա վճարունակության ֆինանսական կառավարման առումով եղել է անկումային 2012թ. -ին: Հիմք ընդունելով դասակարգման արդյունքները՝ տարանջատել ենք հետևյալ վերահսկողության գոտիները՝ ըստ իրացվելիության և ըստ վճարունակության ֆինանսական կառավարման ու ֆինանսական արդյունքի վրա ազդող գործոնների կապի: Ար-

դյունքները ներկայացվել են թիվ 4 աղյուսակում: Ըստ էության, ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ում 2010-2015թթ. առավել բացասական ազդեցություն եղել է ֆինանսական արդյունքի վրա ազդող երկու գործոնների առումով 2013 և 2015թթ, ինչը պայմանավորված էր փոխարժեքի տատաններով:

Աղյուսակ 4. Ըստ իրացվելիության և ֆինանսական արդյունքի վրա ազդող գործոնների փոխազդեցության գոտիները 2010-2015թթ.

Տարիներ/Սահմանային գոտիներ	-2,699>-7.097	-2.699<-0.530
2010		✓
2011		✓
2012		✓
2013	✓	
2014		✓
2015	✓	

Ինչ վերաբերում է ֆինանսական արդյունքի վրա ազդող և մեր կողմից գնահատված երկու հիմնական գործոնների դասակարգման արդույքներին, ապա դրանք ներկայացվել են թիվ 5 աղյուսակում:

Աղյուսակ 5. Ըստ վճարունակության և ֆինանսական արդյունքի վրա ազդող գործոնների փոխազդեցության գոտիները 2010-2015թթ.

Տարիներ/Սահմանային գոտիներ	0.69>0.55	0.69<1.11
2010		✓
2011		✓
2012	✓	
2013	✓	
2014	✓	
2015	✓	

Ըստ վճարունակության և ֆինանսական արդյունքների վրա ազդող գործոնների փոխազդեցության առաջարկող գոտիների՝ դրական են բնութագրվել 2010 և 2011 թթ. 2012-2015թթ. գնահատականը եղել է բացասական, ինչը պահանջում է ձեռնարկել արդյունավետ լուծման միջոցներ: Առավել նախընտրելի են 2010-2011թթ, ուստի հետագայում ֆինանսական արդյունքի վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով հարկ է հաշվի առնել այդ տարիների լավագույն որոշումները:

Վեցերորդ քայլ: Նկատի ունենալով, որ արդյունքային ցուցանիշի հետ նույնաբնույթ կապի տեսանկյունից դիտարկել ենք իրացվելիության և վճարունակության ֆինանսական կառավարման գործընթացները, կարևորում ենք դրանց օպտիմալ վերահսկողության պայմանի որոշման խնդրի լուծումը:

Այդ նպատակով արդյունքային ցուցնաիշի երկու հավասարումների արժեքները միմյանց փոխկապակցելով՝ փորձենք որոշել արդյունավետ միջակայքը, որի սահմանում ֆինանսական արդյունքի վրա ազդող երկու գործոնների՝ իրացվելիության և վճարունակության ազդեցությունները կլինեն ա-

ռավել նախընտրելի: Արդյունքները ներկայացրել ենք աղյուսակում:

Աղյուսակ 6. Ըստ արդյունաքային ցուցանիշի՝ իրացվելիության և վճարունակության փոխկապակցության օպտիմալ հարաբերակցությունը 2010-2015թթ.

Տարիները	Yx	Yz
2010	-0.53	1.11
2011	-0.44	0.92
2012	-1.48	0.47
2013	-4.20	0.64
2014	-2.45	0.51
2015	-7.10	0.55

Առաջարկված մոտեցման շրջանակներում վերին սահմանային միջակայք ընտրվել է վճարունակության գնահատականը, իսկ ստորին սահմանային միջակայք՝ իրացվելիության գնահատականը, ինչը բխում է նաև ֆինանսական կառավարման հիմնադրույթներից, ուստի և վերլուծության գնահատականները և դրանց հիման վրա կատարվող եզրահանգումներն անհրաժեշտաբար պետք է ընդունել հավաստի և օրինաչափ: ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ում արդյունաքային ցուցանիշի՝ իրացվելիության և վճարունակության փոխկապակցության օպտիմալ հարաբերակցության առումով առավել նախընտրելի է 2010թ. : Ուստի, ֆինանսական արդյունքի վերահսկողությանը միտված կառավարչական որոշումներ կայացնելիս ֆինանսական մենեջերը պետք է հաշվի առնի վերլուծության արդյունքների նշված հանգամանքը:

Նշենք, որ քանի որ ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ ընկերությունը հանքարդյունաբերության ոլորտի առաջատար ընկերություններին սպասարկող ընկերություն է, մետաղի գների ազդեցությունը վերլուծության մեջ չեզոքացված է: Այսինքն՝ մետաղի գների փոփոխությունը ուղղակի չի ազդում ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ ֆինանսական արդյունքի վրա: Վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ հիմնական միջոցների հարկային հաշվառման տեսանկյունից կիրառվող մաշվածության մեթոդի և արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը ֆինանսական արդյունքի վրա իրացվելիության և վճարունակության կապի համատեքստում 2010 և 2011թթ. ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի համար եղել են արդյունավետ կառավարչական որոշումների կայացման տարիներ: Հետևաբար առաջարկում ենք նշված կազմակերպության ֆինանսական կառավարչի կողմից 2010 և 2011թթ. փորձը հաշվի առնել որպես լավագույն և այն օրինակելի դարձնելու նպատակով առաջարկում ենք իրականացել հետևյալ քայլերը.

1. Ծախսերի տնտեսում, ինչը շուկայական տնտեսության պայմաններում վերաբերում է ոչ միայն ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ ընկերությանը, այլ բոլորին: Սակայն քննարկվող հարցերի համատեքստում առավել արդիական է ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ ընկերության տեսակետից, քանի որ նրա գործու-

ներության մանրամասներին ծանոթանալիս պարզ է դարձել, որ այն լայնածավալ ներդրումներ և շինարարություն է կազմակերպել, որոնք էլ ապագա հաշվետու ժամանակաշրջաններում բերել են ծախսերի ա-վելացման:

2. Հաշվի առնելով, որ ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊ ընկերությունը ունի ԱՄՆ դոլարով ներգրավված փոխառություններ և վարկ և դիտարկելով 1 ԱՄՆ դոլարի հաշվարկային միջին փոխարժեքը 2010-2015թթ., ինչը ներակայացվել է թիվ 7 աղյուսակում, տրամաբանական է դառնում, որ ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի արդյունքը իրացվելիության և վճարունակության համատեքստում պետք է վատթարանար: Ընկերությունը իր հասույթը ստանում է դրամով, սակայն գումարները ներգրավվել է ԱՄՆ դոլարով, որի հաշվարկային միջին փոխարժեքը 2012թ.-ից սկսած անշեղորեն աճում է. 2013թ.-ին 2012թ.-ի համեմատ 7.9%-ով, հաջորդ տարիներին՝ համապատասխանաբար 1.9%, 1,5% և 14.9%-ով (տե՛ս աղյուսակ 3.3.1):

Աղյուսակ 7. ՀՀ ԿԲ 1 ԱՄՆ դոլարի հաշվարկային միջին փոխարժեքը 2010-2015թթ.(ՀՀ դրամ)²

Տարեթիվ/Ցուցանիշ	Տարվա նվ.փոխարժեք	Տարվա միջին փոխարժեք	Տարվա առավ. փոխարժեք
2010	357.98	373.72	404.36
2011	362.26	372.46	385.77
2012	385.77	401.74	418.66
2013	403.58	409.54	419.08
2014	405.64	415.77	527.2
2015	469.79	477.84	485.61

Այս համատեքստում կարելի է առաջարկել հատկապես ուշադրություն դարձնել ԱՄՆ դոլարով գործարքներին, արտարժույթով ներգրավված միջոցները մի մասը փոխարինել դրամի, ինչպես նաև կարևորել ռուբլու դերը՝ հաշվի առնելով ԵԱՏՄ անդամակցության իրողությունը:

3. Դրամական հոսքերի կառավարման և վերահսկողության գործընթացին մոտենալ կարևորությամբ, քանզի դրա միջոցով կարելի է պահպանել ֆինանսական արդյունքի և վճարունակության և իրացվելիության արդյունավետ մակարդակը: Ինչպես պարզ դարձավ վերլուծության արդյունքում իրացվելիության և վճարունակության խնդիր առկա է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի գրեթե բոլոր կազմակերպություններում: Բիզնես գործընթացների վերահսկողությունը միտված է հաշվեկշռի հոդվածների իրացվելիության բարելավման փոփոխությունների իրականացմանը:

4. Վերանայել կազմակերպության կողմից տնօրինվող ընդհանուր կապիտալի կառուցվածքը:

² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական վեբ կայք՝ www.cba.am

Պետրոս ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ակտիվների իրացվելիության և վճարունակության սահմանային միջակայքերի որոշման մոտեցում

Բանալի բառեր: ակտիվների իրացվելիություն և վճարունակություն, ֆինանսական արդյունք, իրացվելիության և վճարունակության սահմանային միջակայքերը

Ֆինանսական արդյունքի վրա ազդող գործոնների վերահսկողության նպատակով մշակվել է ակտիվների իրացվելիության և վճարունակության սահմանային միջակայքերի որոշման մոտեցում՝ փոխկապվածության մեջ դիտարկելով ակտիվների իրացվելիությունը, վճարունակությունը և ֆինանսական արդյունքը: Այդ նպատակով ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ-ի ֆինանսական արդյունքի վրա հանքարդյունաբերության ոլորտի առաջատար կազմակերպությունների համար տարանջատված երկու գործոնների՝ հիմնական միջոցների մաշվածության և արտարժույթի փոխարժեքային փոփոխությունների հետևանքների ազդեցությունը կփոխկապակցվել է իրացվելիության և վճարունակության ֆինանսական կառավարման գործընթացի հետ:

Петрос МАРТИРОСЯН

Подход определения предельных интервалов ликвидности активов и платежеспособности

Ключевые слова: ликвидность активов и платежеспособность, финансовый результат, предельные интервалы ликвидности и платежеспособности

В статье разработан подход определения предельных интервалов ликвидности активов и платежеспособности, рассматривая ликвидность активов, платежеспособность и финансовый результат в их взаимосвязи. С этой целью, воздействие последствий изменений двух факторов, выделенных для передовых организаций горнодобывающей промышленности – износ основных средств и изменение курса иностранных валют, на финансовый результат ООО «АПАРАЖ МАЙНИНГ», было взаимосвязано с ликвидностью и процессом финансового управления платежеспособностью.

Petros MARTIROSYAN

An approach to determination the ultimate intervals of liquidity of assets and solvency

Key words: liquidity of assets and solvency, financial result, ultimate intervals of liquidity of assets and solvency, correlation of liquidity of assets

An approach to determination of the ultimate intervals of liquidity of assets and solvency was developed in the article considering in correlation the liquidity of assets, solvency and financial result. To this end, the impact of changes of two factors pointed up for the advanced organizations of the mining industry, i.e. depreciation of fixed assets and changes in the foreign currency exchange rates, on the financial result of “APARAZH MAINING” LLC, was correlated with the liquidity and process of financial management of solvency.